Պայմանագրերում ներառվող արբիտրաժային համաձայնություն

Արբիտրաժային համաձայնությունը պայմանագրերում ներառելու ցանկության դեպքում «ՀԲՄ ֆինանսական արբիտրաժ» հիմնարկը խորհուրդ է տալիս պայմանագրի «Վեճերի լուծումը» բաժնում ներառել արբիտրաժային համաձայնության հետևյալ տարբերակը.

«Վեճերի լուծումը»

1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում Կողմերը գալիս են արբիտրաժային համաձայնության այն մասին, որ սույն պայմանագրի շուրջ ծագած բոլոր վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, հանձնվելու է «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին՝ «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, «ՀԲՄ ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կանոնադրությանը և «ՀԲՄ ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կանոնակարգին համապատասխան: Կողմերը սահմանում են, որ արբիտրների կազմը ձևավորվում է «ՀԲՄ ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կանոնակարգի համաձայն: Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ ք. Երևանը: Կողմերը պայմանավորվում են, որ վեճի քննությունը կիրականացվի միայն գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման: Կողմերը տեղեկացվում են, որ «ՀԲՄ ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կանոնադրությանը և «ՀԲՄ ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կանոնակարգին կարող են ծանոթանալ Հայաստանի բանկերի միության կայքից՝ www. uba.am, ….. <u>բանկ</u>ի կայքից, ինչպես նաև ստանալ բանկի գլխամասային գրասենյակից և մասնաճյուղերից: Վեճը լուծվում է Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերի համաձայն»: